«ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ-	011401.00.6 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ -	011401.11.6 «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ»
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ -	ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐ

ՎԱՆԱՁՈՐ 2022

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ՀԼԳ/բ-031 – Հայոց լեզու և գրականություն 1</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">2 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">1-ին տարի, 1-ին կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">28</td><td>Դասախոսություն</td><td></td></tr>
<tr><td>Սեմինար</td><td></td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td>28</td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">32</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">60</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">ստուգարք</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Դասընթացի նպատակն է ապագա մասնագետի գրավոր և բանավոր խոսքի մշակումը, ապագա ուսուցչի, գիտնական-հետազոտողի՝ գործնական, գիտական ոճերին ծանոթացումը՝ կիրառական հմտությունների ձեռք բերման անհրաժեշտությամբ: Այս նպատակին են ծառայում համապատասխան տարաբնույթ վարժությունները, թելադրությունները, թեստային աշխատանքները:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.
Գիտելիք
● գործնական գրություններ (դիմում, զեկուցագիր, տեղեկանք, լիազորագիր) գրելու կանոններ,
● ձայնավորների, բաղաձայնների, երկհնչյունների, հարադիր բարդությունների ուղղագրություն,
● քերականական–ձևաբանական նորմով սահմանված օրինաչափությունները, դրանցից կատարված և կատարվող շեղումներ,
● թույլատրելի զուգաձևությունները ձևաբանական ու շարահյուսական մակարդակներում,
● ներգործական կառուցվածքի փոխակերպումը կրավորականի, ստորադաս նախադասություններինը՝ դերբայական դարձվածների, ուրիշի ուղղակի խոսքինը՝ անուղղակի խոսքի, խոսքի մասերի փոխանցումներ:
Հմտություն
● կտիրապետի ՀՀ պետական լեզվի գործառույթների, կիրառական առանձնահատկությունների նորմերին:
Կարողունակություն
● կկարողանա գործնականում կիրառել ժամանակակից հայերենի կառուցվածքային օրինաչափությունները, քերականական կանոնները:</td></tr>
<tr><td>Դասընթացի բովանդակությունը</td><td colspan="4">Թեմա 1. Հնչյունային ուղղագրության հիմունքները: Պատմական-ավանդական ուղղագրության հիմունքները: Ողղագրության և ուղղախոսության հաղորդակցական արժեքը:
Թեմա 2. Ուղղագրության կանոնների և տեսակների մեկնաբանություն: Ուղղախոսության կանոնների կիրառություն: Ընթերցանություն: Թելադրություն:
Թեմա 3. Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը:
Թեմա 4. Գործնական գրություններ: Գործնական գրությունների</td></tr>
</table>

	կանոնների քննարկում: Դիմում, զեկուցագիր, տեղեկանք, լիազորագիր գրելու կանոնները: *Թեմա 5.* Հարադրավոր բարդություններ: Բառերի միասին գծիկով, անջատ գրություն: *Թեմա 6.* Տողադարձ: Թեստային աշխատանք: *Թեմա 7.* Դարձվածքներ, առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր, դրանց գործածությունը խոսքում: Բառերի ձևաիմաստային խմբերի ոճական և հաղորդակցական արժեքը (հոմանիշ, հականիշ, նույնանաուն, հարանուն): *Թեմա 8.* Խոսքի մասեր: Քերականական – ձևաբանական նորմով սահմանված օրինաչափությունները, դրանցից կատարված և կատարվող շեղումները, թույլատրելի զուգաձևությունները ձևաբանական մակարդակում: *Թեմա 9.* Նախադասության անդամների կետադրությունը: *Թեմա 9.* Ներգործական կառուցվածքի փոխակերպումը կրավորականի: *Թեմա 10.* Բարդ նախադասությունների և դերբայական դարձվածի կետադրությունը: Ստորադաս նախադասությունների փոխակերպումը դերբայական դարձվածների: *Թեմա 11.* Ուրիշի ուղղակի խոսքի կետադրությունը և փոխակերպումը անուղղակի խոսքի: *Թեմա 12.* Խնդրառության և կապերի հոլովառության դերը բանավոր և գրավոր խոսքում: *Թեմա 13.* Համաձայնության դերը բանավոր և գրավոր խոսքում: *Թեմա 14.* Նախադասության հարակից միավորներ: Ամփոփում:
Գնահատման մեթոդները և չափանիշները	Հաճախումները դասերին 20 միավոր Ինքնուրույն աշխատանք 20միավոր Գործնական աշխատանք 20 միավոր Ստուգողականաշխատանք 20 միավոր Ամփոփիչ ստուգում 20 միավոր ——————————————————————— Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը —— 100 % Դասընթացի կրթական վերջնարդյունքներին հասնելու ընթացքի գնահատում՝ 1. Առաջին ընթացիկ ստուգում (դասընթացի 6-րդ շաբաթ) Ստուգման ձևը և գնահատման մեթոդը՝ Գրավոր ստուգում՝ թեստային առաջադրանքների ձևով, պատասխանների գնահատում դասախոսի կողմից՝ յուրաքանչյուր հարցի համար նախապես նշված միավորների հատկացմամբ: Գնահատման չափանիշները՝ - Առաջադրված հարցի ճիշտ պատասխանը, - Առարկայի իմացություն: 2. Երկրորդ ընթացիկ ստուգում (դասընթացի 12-րդ շաբաթ) Ստուգման ձևը և գնահատման մեթոդը՝ Գրավոր ստուգում՝ թեստային առաջադրանքների ձևով, պատասխանների գնահատում դասախոսի կողմից՝ յուրաքանչյուր հարցի համար նախապես նշված միավորների հատկացմամբ: Գնահատման չափանիշները՝ - Առաջադրված հարցի ճիշտ պատասխանը - Առարկայի իմացությունը 3. Մասնակցությունը դասընթացին (ընդհանուր գնահատականի 20%-ը կամ 20միավոր) Գնահատման մեթոդը՝ - Հաճախումների հաշվառում Գնահատման չափանիշները՝

	- ներկայություն 4. Մասնակցությունը գործնական աշխատանքներին (ընդհանուր գնահատականի 20%-ը կամ 20միավոր) Գնահատման մեթոդը՝ - բանավոր հարցման արդյունքների հաշվառում, հիմնախնդիրների քննարկում համակուրսեցիների հետ, գործնական – կիրառական ուղղվածություն ունեցող հանձնարարություններ, թեստային աշխատանք և այլն, 5. Ինքնուրույն աշխատանքներ (ընդհանուր գնահատականի 10%-ը կամ 10միավոր) Գնահատման մեթոդը՝ փորձի ցուցադրում, ուսանողների ինքնուրույն աշխատանքների փորձաքննական գնահատում, մասնակցություն խմբային նախագծերում և այլն, - բառարանային աշխատանքների ստուգում: 6.Գործնական հմտություններ (ընդհանուր գնահատականի 10%-ը կամ 10միավոր) Գնահատման մեթոդը՝ - մենառարկայական և միջառարկայական բնույթի ինքնուրույն և խմբային նախագծեր, գաղափարների / հասկացությունների ձևակերպում, գնահատվող բանավեճ:
Գրականություն	Պարտադիր- 1. Ս. Աբրահամյան, Հայերենի կետադրությունը, Ե., 1999: 2. Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, շարահյուսություն, Ե., 1982: 3. Հ. Բարսեղյան, Ուղղագրական-ուղղախոսական, 4. տերմինաբանական բառարան, Ե., 1982: 5. Դ. Գյուրջինյան, Հայերեն բառարան-տեղեկատու, 6. Միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր, Ե., 2001: 7. Դ. Գյուրջինյան, Մեծատա՞ռ, թե փոքրատառ, Ե., 2005: 8. Քոսյան Վ., Վերդյան Բ., Մարության Ա., Հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Ե., 1989: 9. Գ.Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1984: 10. Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու. Բառագիտություն, 1990/1993: 11. Ա. Սանթոյան, Արդի հայերենի կետադրության համակարգը, Ե., 2004: Լրացուցիչ- 1. Լ.Եզեկյան, Հայոց լեզու, Ե., 2007: 2. Ս. Գալստյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, 2003: 3. Դ.Գյուրջինյան, Գործնական աշխատանքների ձեռնարկ, Ե., 2001: 4. Ռ. Նազարյան, Մայրենին բոլորի համար, Ե., 2006: 5. Վ. Սահակյան, Ուղղագրության, կետադրության և 6. քերականության ուղեցույց, Ե., 2004:

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ՀԼԳ/բ-032- Հայոց լեզու և գրականություն 2</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">2 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">1-ին տարի, 2-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td>Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">28</td><td>Դասախոսություն</td><td></td></tr>
<tr><td>Սեմինար</td><td></td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td>28</td></tr>
<tr><td></td><td>Ինքնուրույն</td><td colspan="3">32</td></tr>
<tr><td></td><td>Ընդամենը</td><td colspan="3">60</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">ստուգարք</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Դասընթացի նպատակն է մի շարք մասնագիտությունների առաջին կուրսի ուսանողներին «Գրականությունե առարկային վերաբերող գիտելիքներ հաղորդել, խորացնել և ընդլայնել հայ գրականության մասին ուսանողների ունեցած ընդհանուր գիտելիքները: Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայ գրականության պատմությանը: Առաջնային նպատակ է նաև ուսանողներին գաղափար տալ հիմնական գրական ուղղությունների մասին՝ մասնավորապես կլասիցիզմի, ռոմանտիզմի, ռեալիզմի, սոց. ռեալիզմի, հիմնարար պատկերացում ձևավորել գրականության զարգացման վերաբերյալ ըստ դարաշրջանների, ուսումնասիրել մի շարք գրողների ստեղծագործությունները, անդրադառնալ դրանց կառուցվածքային և բովանդակային հատկանիշներին, գաղափարին և վերլուծությանը: Նպատակները սահմանվում են հետևյալ սկզբունքներով.
ա. գրականության՝ ըստ ժամանակաշրջանների պատկերացումը,
բ. ժառանգորդական շղթայի օղակների ներկայացումը ակունք-ավանդույթ-նորարարություն իրողության բացահայտմամբ,
գ. ժանրաբանություն, գրական ուղղությունների, մեթոդների, տեսական հասկացություն պարունակող գիտելիքները տրվում են կոնկրետ հեղինակ կամ ստեղծագործություն անցնելիս:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.
Գիտելիք
Տվյալ դասընթացն ավարտելուց հետո ուսանողը պետք է ունենա առարկայի վերաբերյալ համապատասխան թեմաներից մշակումներ, գրի առնվազն երկու ռեֆերատ, կարդացած լինի հանձնարարված գեղարվեստական գրականությունը, լիարժեք պատկերացում ունենա հայ գրականության ընթացքի և զարգացման վերաբերյալ, կարողանա ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում: Միևնույն ժամանակ ուսանողը պետք է անգիր հատվածներ իմանա հանձնարարված չափածո գործերից, մասնակցած լինի բանավիճային քննարկումներին:
Հմտություն
Պետք է տիրապետի գրական-գեղարվեստական գործերի վերլուծության սկզբունքներին ու մեթոդներին, քննարման մասնակցելու կանոններին:
Կարողունակություն
● գրական վերլուծության ենթարկել անհրաժեշտ գեղարվեստական երկերը,
● անգիր հատվածներ ասել պոեզիայից,</td></tr>
</table>

	• զանազանել գրական մեթոդների և ուղղությունների տարբերակիչ սկզբունքները, ժանրային կառուցվածքները, • գրական գործընթացի վերաբերյալ ընդհանուր կարծիք հայտնել:
Դասընթացի բովանդակությունը	*Թեմա 1.* Գրերի գյուտի պատմամշակութային արժեքը, 5-րդ դարի հայ գրականության ընդհանուր բնութագիր: *Թեմա 2.* «Սասնա ծռերե էպոսը: Ստեղծման ժամանակը, կառուցվածքը, կերպարները, առանձնահատ-կությունները: Գեղարվեստական արժանիքները: *Թեմա 3.* Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգությանե աղոթամատյանը: Ֆրիկ. կյանքը և քնարերգությունը: *Թեմա 4.* Միջնադարյան տաղերգություն, հայրեններ: Ժանրը, ժանրակազմ հատկանիշները, թեմատիկ առանձնահատկությունները: *Թեմա 5.* Աբովյանը և լուսավորական շարժումը: Հայ նոր գրականություն:Մուրացանի արձակը: *Թեմա 6.* Հ. Պարոնյանի ստեղծագործությունը: Երգիծանքի տարատեսակները: «Մեծապատիվ մուրացկաններե վիպակը, կերպարները, գաղափարը: *Թեմա 7.* Ռոմանտիզմը որպես գրական մեթոդ, հիմնական հատկանիշենրը: Րաֆֆու «Սամվելե վեպը: Կառուցվածքը, կերպարները, գաղափարը: *Թեմա 7.* Գր. Զոհրապը և հայ նորավիպագրությունը: Զոհրապի կյանքն ու ստեղծագործությունը: Նովելները: *Թեմա 8.* Շիրվանզադեն և հայ դասական ռեալիզմը: Շիրվանզադեի արձակի և դրամատուրգիայի առանձնահատկությունները: *Թեմա 9.* Հ. Թումանյան: Կյանքը և գործը: Քառյակները, պոեմները, արձակը: *Թեմա 10.* Ավ. Իսահակյան: Կյանքը և գործը: Քնարերգությունը: «Աբու-Լալա Մահարիե պոեմը, կառուցվածքը, գաղափարը: *Թեմա 11.* Վ. Տերյանի կյանքը և քնարերգությունը: «Մթնշաղի անուրջներե, «Երկիր Նաիրիե շարքերը: *Թեմա 12.* Բակունցի պատմվածքները: *Թեմա 13.* Գ. Մահարի, կյանքը և ստեղծագործությունը: «Ծաղկած փշալարերե վիպակը:
Գնահատման մեթոդները և չափանիշները	✓ Բանավոր հարցում, թեստային աշխատանք, բնագրային վերլուծություն, ինքնուրույն աշխատանքի ստուգում, ✓ տվյալ առարկայի չափորոշիչով սահմանված ուսանողի գիտելիքները և կարողությունները, ընդհանուր պատկերացումների, գաղափարների, հասկացությունների իմացությունը: ✓ Ամփոփիչ գնահատում Ամփոփիչ գնահատումը կատարվում է 100 միավորանոց սանդղակով. • հաճախումների, • գործնական աշխատանքների բանավոր հարցումների, • երկու գրավոր ստուգողական աշխատանքների, • երկու ինքնուրույն աշխատանքների գնահատման հիման վրա: Ամփոփիչ գնահատման համար նոր հարցում (գրավոր կամ բանավոր) չի կազմակերպվում: □ Ուսանողների միջանկյալ գնահատում Ուսանողների միջանկյալ գնահատումը կատարվում է

	ինքնուրույն կամ ստուգողական աշխատանքների միջոցով: Հանձնարարվում է երկու ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքները հիմնականում ներկայացվում են ռեֆերատի ձևով: Ստուգողական աշխատանքները տրվում են դասընթացին հատկացված ժամերի սահմաններում: Դրանց կարող է հատկացվել 40-80 րոպե: Ստուգողական աշխատանքները կարող են կրկնել լսարանում քննված գեղարվեստական նյութերը՝ հարցադրման որոշ տարբերությամբ:
Գրականություն	Պարտադիր 1. Պ. Հակոբյան - Հայ մշակույթի նշանավոր գործիչներ 2. Ջրբաշյան Է.- Չորս գագաթ , Հայ նոր գրականության պատմություն (հատոր 1-5) 3. Գաբրիելյան Վ.- Սփյուռքահայ գրականություն 4. Ս. Աղաբաբյան - «Սովետահայ գրականության պատմություն» 5. Հր. Թամրազյան - «Սովետահայ գրականության պատմություն» Լրացուցիչ 1. Մովսես Խորենացի - «Հայոց պատմություն» 2. Գրիգոր Նարեկացի - «Մատյան ողբերգության» 3. Խաչատուր Աբովյան - «Վերք Հայաստանիե 4. Հովհ. Թումանյան - բանաստեղծություններ, «Անուշ» պոեմը 5. Ե. Չարենց - բանաստեղծություններ, «Գիրք ճանապարհի» 6. Պ. Սևակ - «Անլռելի զանգակատուն», «Եղիցի լույս», «Մարդը ափի մեջ», այլ 7. Հրանտ Մաթևոսյան - «Աշնան արև»

Դասընթացի թվանիշը, անվանումը	**Պ/Բ-048-Հայոց պատմության հիմնահարցեր -1**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի,1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10
			Սեմինար	14
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	Հայոց պատմության հիմնահարցեր առարկայի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ հայոց պատմության հին, միջին և նոր շրջանների ազատագրական պայքարի և հայոց պետականության պատմության վերաբերյալ:			
Դասընթացի	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.			

վերջնարդյունքները	*Գիտելիք* Հայոց պատմության հին, միջին և նոր շրջանների ազատագրական պայքարը, հայոց պետականության պատմությունը, 5-րդ դարի ազատագրական պայքարից մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: *Հմտություն* • տեղեկույթը կառավարելու հմտություն (տեղեկույթի ձեռք բերում, համակարգում, վերլուծում) • սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ • ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ Կարողունակություն • առարկայական գիտելիքներին տիրապետելու կարողություն • վերլուծության և համադրության կարողություն • քննադատության և ինքնաքննադատության կարողություն • պատմական փաստերը համադրելու և երևույթները համակողմանի գնահատել կարողություն • պատմական կոնկրետ փաստերն ու երևույթները ընդհանուր տեսությունների, գաղափարների տեսանկյունից բացահայտելու կարողություն
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1. V դ. ազատագրական պայքարը Թեմա 2. VI-VII դդ. ազատագրական պայքարը Թեմա 3. VIII-IX դդ. ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ Թեմա 4. Հայաստանի ազատագրության ծրագրերը Թեմա 5. Հայ ժողովրդի ազգային ազատագրության որոնումները XVII երկրորդ կեսին և XVIIIդ. առաջին քառորդին Թեմա 6. Հովսեփ Էմինը և Հայաստանի ազատագրության նրա ծրագրերը Թեմա 7. Հայաստանի ազատագրության ծրագրերը XVIII դ. II կեսին Թեմա 8. Ազատագրական պայարը Արցախում և Սյունիքում Թեմա 9. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գնահատումն իրականացվում է 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ՝ • ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան • ինքնուրույն աշխատանքի կատարում • սեմինար պարապմունքներին ուսանողի մասնակցություն • ուսանողի կողմից դրսևորած ընթացիկ ակտիվություն, հմտություններ և կարողություններ • Հարցախույզ, ճեպահարցում • թեստային առաջադրանքներ՝ պատասխանի ընտրությամբ կամ կարճ ազատ պատասխանով հարցերով:
Գրականություն	Պարտադիր 1. Սիմոնյան Հր. «Հայ ժողովրդի պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», Երևան, 2000թ. 2. Սիմոնյան Հր. Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2012թ. 3. Մելքոնյան Ա, Մինասյան Է. «Հայ ժողովրդի պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», Երևան, 2009թ. 4. Աշոտ Մելքոնյան «Հայոց պատմության ակնարկներ (հնագույն ժամանակներից մինչև XIX դարի վերջ)» Երևան, 2018 5. Էդուարդ Դանիելյան, Աշոտ Մելքոնյան «Հայոց պատմություն:

	Հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը», Երևան, 2015 6. Հայ ժողովրդի պատմություն, հտ. IV–VIII, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1967, 1970, 1972, 1974, 1981: 7. Ժամկոչյան Հ., Գ. Աբրահամյան Ա., Մելիք- Բախշյան Ս. « Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1876: 8. Հայ ժողովրդի պատմություն, հտ. I-IV, ՀՀ ԳԱԱ հրատ., 2018 Լրացուցիչ 1. Աբրահամյան Ա.Գ., «Իսրայել Օրի», 1978թ. 2. Գալոյան Գ. Հայաստանը մեծ տերությունների աշխարհաքաղաքական առճակատումներում, 2004թ. 3. Համբարյան Ա.Ա., «Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում», Երևան, 1999: 4. Հայոց պատմություն /խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., Եր., 2014: Հ. 2, Գիրք II: Միջին դարեր: (IX դարի կես-XVII դարի I տասնամյակ): 5. Հայոց պատմություն /խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., Եր., 2010: Հ. 3,: Գիրք I: Նոր ժամանակաշրջան (XVII դարի II կես -XIX դարի վերջ):

Դասընթացի թվանիշը, անվանումը	Պ/Բ-049-Հայոց պատմության հիմնահարցեր -2			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10
			Սեմինար	14
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	Հայոց պատմության հիմնահարցեր առարկայի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ հայոց պատմության հին, միջին և նոր շրջանների ազատագրական պայքարի և հայոց պետականության պատմության վերաբերյալ:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* Հայոց պատմության հին, միջին և նոր շրջանների ազատագրական պայքարը, հայոց պետականության պատմությունը, հայ հասարակական-քաղաքական հոսանքների ձևավորումից մինչև Հայաստանի անկախության հռչակագիրը. անկախ պետականության վերականգնումը *Հմտություն* • տեղեկույթը կառավարելու հմտություն (տեղեկույթի ձեռք բերում, համակարգում, վերլուծում) • սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ • ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ			

	Կարողունակություն • առարկայական գիտելիքներին տիրապետելու կարողություն • վերլուծության և համադրության կարողություն • քննադատության և ինքնաքննադատության կարողություն • պատմական փաստերը համադրելու և երևույթները համակողմանի գնահատել կարողություն • պատմական կոնկրետ փաստերն ու երևույթները ընդհանուր տեսությունների, գաղափարների տեսանկյունից բացահայտելու կարողություն
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1. Հայ հասարակական-քաղաքական հոսանքները Թեմա 2. Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների վերելքը XIXդ. 90ական թթ Թեմա 3. Հայկական հարցի ծագումը և նրա միջազգայնացումը Թեմա 4. Հայաստանի ազատագրության ծրագրերը Թեմա 5. Ֆիդայական շարժումը Թեմա 6. Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները Թեմա 7. Ազգային կուսակցությունների առաջացումը Թեմա 8. Հայկական հարցը 1912-1914 թթ Թեմա 9. Հայոց Մեծ եղեռնը Թեմա 10. 1915 թ. ինքնապաշտպանական մարտերը Թեմա 11. 1918 թ. մայիսյան հերոսամարտերը. Հայաստանի հանրապետության հռչակումը Թեմա 11. Հայաստանի Առաջին հանրապետությունը 1918-1820 թթ Թեմա 12. Արցախյան շարժման նոր փուլը, Հայաստանի անկախության հռչակագիրը. անկախ պետականության վերականգնումը Թեմա 13. ՀՀ պետական խորհրդանիշները, դրոշը, օրհներգը, զինանշանը
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գնահատումն իրականացվում է 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ՝ • ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան • ինքնուրույն աշխատանքի կատարում • սեմինար պարապմունքներին ուսանողի մասնակցություն • ուսանողի կողմից դրսևորած ընթացիկ ակտիվություն, հմտություններ և կարողություններ • Հարցախույզ, ճեպահարցում • թեստային առաջադրանքներ՝ պատասխանի ընտրությամբ կամ կարճ ազատ պատասխանով հարցերով:
Գրականություն	Պարտադիր 1. Սիմոնյան Հր. «Հայ ժողովրդի պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», Երևան, 2000թ. 2. Սիմոնյան Հր. Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2012թ. 3. Մելքոնյան Ա, Մինասյան Է. «Հայ ժողովրդի պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», Երևան, 2009թ. 4. Աշոտ Մելքոնյան «Հայոց պատմության ակնարկներ (հնագույն ժամանակներից մինչև XIX դարի վերջը) Երևան, 2018 5. Էդուարդ Դանիելյան, Աշոտ Մելքոնյան «Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը», Երևան, 2015

	6. Հայ ժողովրդի պատմություն, հտ. IV–VIII, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1967, 1970, 1972, 1974, 1981: 7. Ժամկոչյան Հ., Գ. Աբրահամյան Ա., Մելիք- Բախշյան Ս. « Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1876: 8. Հայ ժողովրդի պատմություն, հտ. I-IV, ՀՀ ԳԱԱ հրատ., 2018 9. Խաչատրյան Կ. «Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ.», Երևան, 2007: Լրացուցիչ 1. Գալոյան Գ. Հայաստանը մեծ տերությունների աշխարհաքաղաքական առճակատումներում, 2004թ. 2. Համբարյան Ա.Ա., «Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում», Երևան, 1999: 3. Հայոց պատմություն /խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., Եր., 2014: Հ. 2, Գիրք II: Միջին դարեր: (I X դարի կես-XVII դարի առաջին տասնամյակ): 4. Հայոց պատմություն /խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., Եր., 2010: Հ. 3,: Գիրք I : Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես -XIX դարի վերջ): 5. Ավետիսյան Հ.Ա. «Հայկական հարցը 1918թ.». Երևան, 1997 6. Վրացյան Ս. «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993 7. Սիմոնյան Հր. «Անդրանիկի ժամանակը», գիրք 1-2, Երևան, 1996:

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ՕԼԳ/բ-001 Ռուսաց լեզու-1** **ՕԼԳ/բ-002 Ռուսաց լեզու-2**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ/4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 1-ին և 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	56/56	Դասախոսություն	
			Սեմինար	
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	56/56
	Ինքնուրույն	64/64		
	Ընդամենը	120/120		
Ստուգման ձևը	ստուգարք			
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* Գիտի			

	- կարդալու հիմնական կանոնները; - շեշտի տեղը ամենատարածված բառերում, - ուսումնասիրված բառային միավորների հիմնական իմաստները, որոնք ծառայում են ռուսալեզու հաղորդակցության իրավիճակներին առօրյա, սոցիալ-մշակութային և կրթական և մասնագիտական գործունեության ոլորտներում. - կրթության տվյալ փուլի բանավոր և գրավոր հաղորդակցության մեջ օգտագործվող հիմնական քերականական երևույթները, կառուցվածքները. - ռուսալեզու խոսքի վարքագծի տարրական նորմերը *Հմտություն* - գրավոր և բանավոր խոսքի բոլոր տեսակները կիրառելու հմտություններ; - կրթական և մասնագիտական հաղորդակցության ոլորտներում և իրավիճակներում ռուսաց լեզվի օգտագործման հմտություններ ձեռք բերելու տարրական տեխնիկա (ռազմավարություն և մարտավարություն;. - բանավոր և գրավոր խոսքի մշակույթի նորմեր ձեռք բերելու հմտություն; - գրագետ բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություն; - տարբեր աղբյուրներից տեղեկատվության հետ աշխատելու հմտություն; - հրապարակային խոսքի, փաստարկի, քննարկման և վիճաբանության հմտություններ. *Կարողություն* *Կարող է* - կարդալ ցանկացած բովանդակության տեքստ; - որոշել տեքստի թեման; - բավարար ամբողջականությամբ և ճշգրտությամբ հասկանալ տեքստի հիմնական տեղեկատվությունը; - տարբերակել բառի ուղղակի և փոխաբերական իմաստը; - խոսքում օգտագործել հոմանիշներ, հականիշներ և բազմիմաստ բառեր, դարձվածքաբանական միավորներ; - ինքնուրույն արտադրել համահունչ, տրամաբանական հայտարարություններ ուսումնասիրված թեմաների վերաբերյալ տրված միջավայրին համապատասխան; - երկխոսություններ կառուցել; - օգտագործել ուղղակի և անուղղակի խոսք; - հասկանալ մենախոսության թեման և նրա մեջ պարունակվող հիմնական տեղեկատվությունը; - հասկանալ զրուցակցի հայտարարության բովանդակությունը, նրա հաղորդակցական մտադրությունները.
Դասընթացի բովանդակությունը	1 կիսամյակ Թեմա 1. Օտար լեզուների դերն ու նշանակությունը մարդու կյանքում Թեմա 2. Մարդ.Դիմանկար. Բնավորություն Թեմա 3. Կյանքի ոճ

	Թեմա 4. Դար ապրի- դար սովորի Թեմա5. Գեղեցկությունը կփրկի աշխարհը. Մշակույթ. Արվեստ Թեմա 6. Աշխարհը ճանապարհորդի աչքերով Թեմա 7. Տոներ. Ավանդույթներ. Սովորույթներ Թեմա 8. Հայրեր և երեխաներ. Սերունդների բախում 2 կիսամյակ Թեմա 1. Գիտություն և տեխնիկա Թեմա 2. Բնությունը և մարդը Թեմա 3. Առողջ ապրելակերպ. Սնունդ Թեմա 4. Առողջ ապրելակերպ. Սպորտ Թեմա 5. ՁԼՄ. Ինտերնետ. Ծփում սացցանցերում՝դրական և բացասական կողմերը Թեմա 6. Թերթելով պատմության էջերը Թեմա 7. Գրավոր և բանավոր խոսքի մշակույթը գործնական հաղորդակցման մեջ
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գրավոր և բանավոր հարցում, ինքնուրույն աշխատանք, թեստ, սալիկահանդես, ֆրոնտալ հարցում, ստուգողական աշխատանք, ամփոփիչ աշխատանք
Գրականություն	1. Պարտադիր Русская грамматика. – Т. 1,2. М., 1980. Современный русский язык / Под ред. Д.Э. Розенталя. Ч. 1,2. М., 1979. Современный русский литературный язык / под ред. П.А. Леканта. М., 1988. Новикова А.С. Русский язык. Фундаментальный курс. М., 1993 Костомаров В.Г., Максимов В.И. Современный русский язык. М., 2010. Ремчукова Е.Н. Мофология современного русского языка. Учебное пособие. М., 2004. Ипполитова Н.А., Князева О.Ю.,Савова М.Р. Русский язык и культура речи. М., 2003. ГончароваТ.В., Плеханова Л.П. Речевая культура личности: практикум. М., 2011. Шулежкова С.Г. «И жизнь, и слезы, и любовьե Происхождение, значение, судьба 1500 крылатых слов и выражений русского языка. М., 2011. Лексический минимум по русскому языку как иностранному. Элементарный уровень. Общее владение. Спб, 2012. Лексический минимум по русскому языку как иностранному. Базовый уровень. Общее владение. Спб, 2011. Лексический минимум по русскому языку как иностранному. Первый сертификационный уровень. Общее владение. Спб, 2011. Лексический минимум по русскому языку как иностранному. Второй сертификационный уровень. Общее владение. Спб, 2013. Программа по русскому языку для иностранных граждан. Первый

	сертификационный уровень. Общее владение. 1-й уровень спб, 2012. Типовые тесты по русскому языку как иностранному. Элементарный уровень. Общее владение. Варианты. Книга + 1cd. Спб, 2012. Типовые тесты по русскому языку как иностранному. Базовый уровень. Общее владение. Варианты. Книга + 1cd. Спб, 2012. Типовые тесты по русскому языку как иностранному. Первый сертификационный уровень. Общее владение. Второй вариант. Книга + cd. М., спб, 2012. Одинцова И.В. Что вы сказали? СПб, 2007. Баско Н.В. Изучаем русский, узнаем Россию. М., 2011. Киселева М.С. Русский язык как иностранный. М., 2010 2. Լրացուցիչ Современный русский язык в трех частях / В.В. Бабайцева, Л.Ю. Максимов. М, 1987. Современный русский язык. Теория. Анализ языковых единиц: В 2-х частях. – Часть II. Морфология. Синтаксис / под ред. Е.И. Дибровой. М., 2001. Распопов И.П. Строение простого предложения в современном русском языке. М., 1970. Лекант П.А. Синтаксис простого предложения в современном русском языке. М., 1974. Современный русский язык / Р.Н. Попов, Д.П. Валькова, Л.Я. Маловицкий, А.К. Федоров. М., 1978. Ковтунова И.И. Современный русский язык. Порядок слов и актуальное членение предложения. М., 1976. Наши трёхъязычные дети. Елена Мадден. СПб, 2011.

Դասընթացի թվանիշը, անվանումը	**Պ/բ-062-Փիլիսոփայության հիմնահարցեր**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	44	Դասախոսություն	24
			Սեմինար	20
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	76		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	Քննություն			
Դասընթացի նպատակը	Փիլիսոփայություն առարկայի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ աշխարհայացքի, նրա տարատեսակների և ձևերի մասին, բացահայտել իրականության սկզբնապատճառը, զարգացման օրենքներն ու օրինաչափությունները, մեկնաբանել շարժման մեխանիզմը, ձևերը և դրանց դերը զարգացման գործընթացում: Ուսանողները			

	գիտելիքներ են ստանում նաև հասարակության, նրա առանձնահատկությունների և գործառույթների մասին: Դասընթացը ներկայացնում է փիլիսոփայական գիտելիքների պատմականությունը, ուսումնասիրման ընթացքում ուսանողը գաղափար կունենա նորագույն շրջանի փիլիսոփայական տեսությունների և ուղղությունների, հայ փիլիսոփայական մտքի զարգացման շրջանների մասին: Առարկայի ուսումնասիրումը հնարավորություն կտա կատարել ընդհանրացումներ աշխարհայացքի, տարբեր գաղափարական հոսանքների, տեսությունների և հիմնադրույթների վերաբերյալ: Փիլիսոփայություն առարկայի ուսումնասիրմամբ ուսանողը միաժամանակ կշփվի տրամաբանության, մշակութաբանության, քաղաքագիտության և այլ գիտությունների հետ: Փիլիսոփայություն առարկան նախատեսված է ներկայացնել բոլոր բաժինների համար, որպեսզի ապագա մասնագետի մոտ ձևավորվի իրականության վերաբերյալ ընդհանրական գիտելիքներից եզրահանգումներ կատարելու հմտություն և կարողություն:
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* 1. ինքնուրույն վերլուծել փիլիսոփայական հիմնախնդիրները 2. տարբերել փիլիսոփայական տարբեր ուղղությունների գաղափարական հիմնավորումները 3. տարբարակել փիլիսոփայության մտքի պատմության հիմնական էտապները, յուրաքանչյուրի հիմնական մոտեցումները 4. Ներկայացնել հասարակական գիտակցությունը ձևերը, դրանց ընդհանրությունն ու տարբերությունը 5. հասկանալ փիլիսոփայական հասկացությունների, կատեգորիաների և օրենքների էությունը, կիրառման բնագավառը *Հմտություն* 1. գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն 2. հետազոտություններ կատարելու ունակություններ 3. սովորելու ունակություն 4. առաջնորդի հատկություններ 5. որակի կարևորության գիտակցում 6. Կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները *Կարողունակություն* *1.վ*երլուծման և համադրման ունակություն 2. կազմակերպման և պլանավորման ունակություն 3. հենքային և ընդհանուր գիտելիքներ 4. տեղեկատվությունը կառավարելու ունակություն, տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն 5. քննադատական վերլուծություն և ինքնաքննադատման ունակություն 6. միջառարկայական թիմում աշխատելու ունակություն
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1. Փիլիսոփայությունը որպես գիտություն Թեմա 2. Փիլիսոփայության զարգացման պատմական փուլերը Թեմա 3. Մատերիա և կեցություն

	Թեմա 4. Հոգևորի / գիտակցության/ պրոբլեմը փիլիսոփայության մեջ Թեմա 5. Զարգացման հիմնախնդիրը/ օրենքները և կատեգորիաները/ Թեմա 6. Իմացության տեսություն: Գիտական իմացություն Թեմա 7. Սոցիալական փիլիսոփայություն, հասարակության սոցիալ-տնտեսական համակարգը Թեմա 8. Հասարակության քաղաքական և հոգևոր համակարգը Թեմա 9. Հասարակական գիտակցություն Թեմա 10. Մարդու հիմնախնդիրը փիլիսոփայության մեջ
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով՝ 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ. ✓ ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան, ✓ ինքնուրույն աշխատանքի կատարում, ✓ սեմինար պարապմունքներին ուսանողի մասնակցություն, ✓ ուսանողի կողմից դրսևորած ընթացիկ ակտիվություն, հմտություններ և կարողություններ, ✓ թեստային առաջադրանք պատասխանի ընտրությամբ կամ կարճ ազատ պատասխանով ✓ ամփոփիչ քննություն համակարգչային ստուգմամբ
Գրականություն	Պարտադիր 1. Ս. Հակոբյան – Փիլիսոփայության դասընթաց, Երևան 2005 2. Մ. Ասատրյան – Փիլիսոփայության ներածություն, Երևան 2004 3. Վ. Կանկե - Փիլիսոփայություն, Երևան, 2000 4. Հ. Ծաքարյան – Փիլիսոփայություն, Երևան, 2005 5. Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975. 6. Ս. Զաքարյան – Փիլիսոփայության պատմություն, Երևան 2005 Լրացուցիչ 1.Իովչուկ – Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ, Երևան, 1979 2.Էդ. Հարությունյան, Քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրները անցումային հասարակությունում, Երևան, 2005 3. И.Т. Фралов, Введение философии

Դասընթացի թվանիշը, անվանումը	**Պ/բ-064- Մշակութաբանություն**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 1-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10
			Սեմինար	14
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	ստուգարք			
Դասընթացի նպատակը	• Մշակութաբանություն դասընթացի ծրագրային բովանդակության տիրապետումը, մշակույթի, մարդու, հասարակության ու աշխարհի մասին ընդհանուր			

	գիտելիքների յուրացում: • աշխարհայացքային կողմնորոշումների հստակեցում • մասնագիտական, ընդհանուր գիտական և մշակութաբանական խնդիրների փոխառնչությունների պարզաբանման սկզբունքային մոտեցումների իմացում • մասնագիտական գիտելիքների զարգացմանը նպաստող մշակութա-մեթոդաբանական մտածելակերպի տարրերի ձևավորում • համաշխարհային և ազգային մշակույթի նվաճումներին հաղորդակից լինելը և մշակութաբանության բարդ հիմնախնդիրների համակարգում ճիշտ կողմնորոշվելը
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* Մշակութաբանության որպես ինքնուրույն գիտության ձևավորումը, հետազոտման մեթոդները: Մշակույթ հասկացության մեկնաբանումը և սահմանումները: Մշակույթի գործառույթները: Մշակույթի դասակարգման հիմնական չափորոշիչները, մշակույթի առանձին տիպերի բնութագիրը, կրոն և մշակույթ, բարոյականություն, արվեստ, գիտություն: Բնությունն իբրև փիլիսոփայական և մշակութաբանական կատեգորիա: Արժեք հասկացության բնորոշումը, մշակույթի և արժեքների կապը, արժեքների դասակարգումը: Քաղաքակրթություն հասկացության բնութագիրը, քաղաքակրթության և մշակույթի ընդհանրություններն ու տարբերությունները; *Հմտություն* • մշակութային երևույթների օրինաչափությունները, կառուցվածքը, տիպաբանությունը, պատճառա-հետևանքային կապերը հասկանալու ունակություն • մշակույթի վերաբերյալ եղած սկզբնաղբյուրների հետ աշխատելու ունակություն • ունեցած ինֆորմացիայի և տեղեկատվության տարբեր ձևերը օգտագործելու հմտություններ • մշակույթի վերաբերյալ ունեցած գիտելիքների համակարգում և վերլուծություն • մասնագիտական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ • տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման ունակություն, • միջանձնային գործնական հմտություններ *Կարողունակություն* • Ինքնուրույն աշխատելու ունակություն • Հետազոտություններ կատարելու ունակություն • Անկախ սովորելու ունակություն • Հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները • Համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվություն, • Հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները • Ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում

	հետազոտությունների որակի իմացություն
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1. Մշակութաբանության ուսումնասիրության առարկան, մեթոդները, գործառույթները Թեմա 2. Զանգվածային և էլիտար մշակույթ Թեմա 3. Հոգևոր գործունեության մշակութային ձևերը Թեմա 4. Մարդ, բնություն, մշակույթ Թեմա 5. Մշակույթ և արժեքներ, մշակույթ և քաղաքակրթություն Թեմա 6. Մշակութային երկխոսություն և գլոբալիզացիա
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գիտելիքների ստուգումը և գնահատումը իրականացվում են հետևյալ բաղադրիչներով՝ ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման միջոցով, բ) գործնական (սեմինար) աշխատանքներին ուսանողի մասնակցության, նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում, գ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) հաշվառում գնահատում, դ) կրթական մոդուլի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում ու գնահատում կիսամյակի ընթացքում, ե) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, անհատական առաջադրանքների, գործնական աշխատանքներին ուսանողի ակտիվության, հմտությունների և կարողությունների գնահատման, ընթացիկ և հանրագումարային գնահատումների հիման վրա դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում
Գրականություն	*Պարտադիր-* Մելքումյան Գ.Ա. Մշակութաբանություն, 2001 Գուրևիչ Ս., Մշակութաբանություն,1996 Բորև Յու.Բ., Գեղագիտություն, 1989 Սարգսյան Ս.Ա., Մշակութաբանություն, 1996 *Լրացուցիչ-* Հովհաննիսյան Ս., Կուլտուրան և բնությունը, Երևան, 1984 Макарян Э.С. , Теориякультурыисовременнаянаука, Ереван 1984 Малюра Ю.А. Культурология, Москва, 1999 Лосев А.Д. Философия. Мифология. Культура, Москва, 1991 Культурология. История мировой культуры, Москва, 1995 Розин В.М. Введение в культурологию, Москва, 1994 Швейцер А. Культура и этика, Москва, 1994 Шнен О. Закат Европы, Москва, 1991 Философский словарь, Москва, 1983 Փիլիսոփայական բառարան

Դասընթացիթվանիշը, անվանումը	**ՄՀ/բ 058-Սոցիոլոգիա**			
Դասընթացինհատկացվողկրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառությանտարի / կիսամյակ	2-րդ տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերիբաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10

			Սեմինար	14
			Լաբորատորաշխատանք	
			Գործնականաշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգմանձևը	Ստուգարք			
Դասընթացինպատակը	Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել սոցիոլոգիայի պատմական անհրաժեշտության, հասարակության ուսումնասիրության համար ունեցած դերի, սոցիոլոգիական աշխարհայացքի բազմազանության և բազմաձևության մասին:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթականծրագրիհետևյալվերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* Հասարակությունն իբրև համակարգ, դրա հիմնական տարրերը, դրանց միջև փոխկախվածության գործընթացները և վերահսկողության մեխանիզմները: *Հմտություն* Սոցիոլոգիական տեսությունների հիմնական ձևերին, մեթոդներին, գործիքներին, վերլուծության եղանակներին: *Կարողունակություն* Նախագծել սոցիալական որևէ երևույթի ուսումնասիրմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտության ծրագիր:			
Դասընթացիբովանդակությունը	Թեմա 1 Սոցիոլոգիայի ձևավորման նախադրյալները. պատմական ակնարկ:ՈՒսումնասիրության օբյեկտը, առարկան, ֆունկցիաները, կապն այլ գիտությունների հետ: Թեմա 2 Հասարակության կառուցվածքային տարրերը.անհատ, խումբ (տեսակները), կազմակերպություն, ինստիտուտ: Թեմա 3 Հասարակության վերահսկողության մեխանիզմներ. մշակույթ և սոցիալականացում: Թեմա 4 Հասարակության շերտավորում: Թեմա 5 Սոցիոլոգիական հետազոտության մեթոդները:			
Գնահատմանմեթոդները և չափանիշները	Գնահատման մեթոդները. Խմբային աշխատանք, անհատական ներկայացումներ, բանավեճ, հարց ու պատասխան, հարցախույզ: Գնահատման չափանիշները Ուսանողի գիտելիքը՝ • Սոցիոլոգիայի առաջացման պատմական անհրաժեշտության, վերջինիս ուսումնասիրման օբյեկտի, առարկայի, գործառույթների, հիմնականխնդիրների, սոցիոլոգիական գիտելիքի բազմամակարդակ կառուցվածքի վերաբերյալ, • հասարակության պատմական տիպերի, զարգացման օրինաչափությունների, հիմնական ընդհանրությունների եւ տարբերությունների, համակարգային մոտեցման, հասարակության՝իբրեւ համակարգի՝բազմամակարդակ կառուցվածքում գործառնող եւ փոխկախված տարրերի (անհատը՝սոցիալական գործողություն կատարելու տեսանկյունից, խմբեր, կազմակերպություններ, ինստիտուտներ) վերաբերյալ, • հասարակության վերահսկողության մեխանիզմների, դրանց փոխպայմանավորվածության վերաբերյալ, • հասարակության ստրատիֆիկացիոն կառուցվածքի			

	(շերտավորման), այն մեկնաբանող մոտեցումների, հիմնական շերտերի բնութագրի, մոբիլության, վերջինիս տեսակների, ըստ մոբիլության «բացե եւ «փակե հասարակությունների մեկնաբանման վերաբերյալ • Սոցիոլոգիական հետազոտության առանձնահատկությունների վերաբերյալ:
Գրականություն	Պարտադիր- 1. Կրավչենկո «Սոցիոլոգիաե Եր.2004 2. Մկրտչյան Ե.Ռ.,Բալայան Ն.Մ.,Սոցիոլոգիա, Երևան 2002 3. Социология, Учебник для студентов вузов, Батурин В.К., 2012 4. Giddens, Anthony, Duneier, Mitchell, Applebaum, Richard. 2007. *Introduction to Sociology. Sixth Edition.* New York: W.W. Norton and Company. Chapter Լրացուցիչ- 1. Социология, Волков Ю.Е., 2012 2. История теоретической социологии, Предыстория социологии, Учебное пособие для вузов, Давыдов Ю.Н., 2010 3. Социология, Курс лекций, Акимова И.А., Багдасарьян Н.Г., 2010 4. Steven Loyal ‘’The Sociology of Anthony Giddens’’, 2003

Դասընթացի թվանիշը, անվանումը	**Պ/բ- 063 –Համաշխարհային մշակույթի պատմություն**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10
			Սեմինար	14
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	ստուգարք			
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է՝ • ուսանողներին տալ գիտելիքներ տարբեր երկրներում համաշխարհային մշակույթի ձևավորման փուլերի, առանձնահատկությունների վերաբերյալ • համաշխարհային նշանակության մշակութային ձեռքբերումների վերաբերյալ • ուսումնասիրել համաշխարհային մշակույթը՝ անտիկ ժամանակաշրջանից մինչև մեր օրերում տեղի ունեցող մշակութային գործընթացները:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* • Ճանաչել Հին Հունաստանի և Հին Հռոմի մշակույթը • Իմանալ Միջնադարյան Եվրոպայի մշակույթի յուրահատկությունները			

	• Տարբերել Վերածննդի ժամանակաշրջանի մշակույթը՝ իր բոլոր փուլերով • Գնահատել 17-րդ դարի Եվրոպական մշակույթի ձեռքբերումները • Իմանալ Լուսավորության շրջանի մշակութային առանձնահատկությունները • Պատկերացնել 19-րդ դարի ռոմանտիզմի զգացմունքայնությունը, հուզավառությունը և իռացիոնալությունը • Տիրապետել 20-րդ դարի մշակույթին՝ իր բազմազան ճյուղերով, ուղղություններով, առանձնահատկություններով *Համոզություն* • Համեմատել և զուգահեռներ անցկացնել Հայաստանի և այլ երկների մշակույթների միջև՝ կիրառելով համաշխարհային մշակութային ժառանգության փորձը • Գնահատել մարդկության մշակութային ձեռքբերումները *Կարողունակություն* • Տարանջատել համաշխարհային մշակութի պատմության վերաբերյալ գիտելիքը ըստ պատմական ժամանակաշրջանների, • Վերլուծել համաշխարհային մշակութի ժառանգությունն ըստ մշակութային ոճերի • Բացահայտել համաշխարհային մշակույթի ամենից հայտնի հոգևոր և նյութական մշակութային ժառանգության նմուշները • Գնահատել տուրիստական ամենից հայտնի մշակութային վայրերը, դրանց նշանակությունն ու կարևորությանը
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1. Ներածություն: Համաշխարհային մշակույթի պատմության հիմնական գծերը և առանձնահատկությունները Թեմա 2. Անտիկ ժամանակաշրջանի մշակույթը Թեմա 3. Միջնադարյան Եվրոպայի մշակույթը Թեմա 4. Վերածննդի ժամանակաշրջանի մշակույթը Թեմա 5. Եվրոպական մշակույթը 17-րդ դարում Թեմա 6. Լուսավորության շրջանի մշակույթը Թեմա 7. Եվրոպական մշակույթը 19-րդ դարում Թեմա 8. Եվրոպական մշակույթը 20-րդ դարում
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով՝ 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ. • ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան, • ինքնուրույն աշխատանքի կատարում, • սեմինար պարապմունքներին ուսանողի մասնակցություն, • ընթացիկ ստուգում

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ԷԻԿ/բ-105 – Իրավագիտություն**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10
			Սեմինար	14

			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	ստուգարք			
Դասընթացի նպատակը	• ուսանողներին զինել գիտելիքներով հանցավորության և դրա հետ կապված հարաբերությունների մասին, • ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական, իրավագիտական աշխարհայացքը, • նախապատրաստել ուսանողներին ուսումնասիրված նյութի գործնական կիրառմանը, • խորացնել ընդհանուր իրավագիտական գիտությունների առարկայաշարի ուսումնասիրությունը:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* • Իրավունքի հիմնական ճյուղերի (մասնավորապես՝ սահմանադրական իրավունքի, վարչական իրավունքի և վարչական դատավարության, քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության, աշխատանքային իրավունքի, քրեական իրավունքի և քրեական դատավարության, էկոլոգիական իրավունքի, միջազգային հանրային իրավունքի, դրանց սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության և էության, այդ ինստիտուտների և նորմերի օրենսդրական ամրագրման և կիրառման գործընթացի վերաբերյալ հիմնարար և համակարգված գիտելիք: *Հմտություն* • Կարող է կիրառել մասնագիտական գիտելիքներն առավել հաճախ հանդիպող իրավական խնդիրների լուծման համար: *Կարողունակություն* • Ունակ է՝ պարբերաբար ուսումնասիրելու օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, մասնագիտական գրականությունը և ինտեգրվելու հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրին:			
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1- Պետության և իրավունքի առաջացումը, Թեմա 2- Պետության էությունը և գործառույթները, Թեմա 3- Իրավունքը սոցիալական նորմերի համակարգում, Թեմա 4- Սոցիալական նորմերի հասկացությունն ու տեսակները, Թեմա 5- Իրավունք և իրավագիտակցություն, Թեմա 6- Օրինականություն և իրավակարգ, Թեմա 7- Իրավունքի համակարգը, Թեմա 8- Իրավական պետություն, Թեմա 9- Սահմանադրական իրավունք, Թեմա 10- Սահմանադրական կարգ հասկացությունը			
Գնահատման մեթոդները և չափանիշները	6.1. Գնահատման մեթոդներին և չափորոշիչներն ուղղորդված են կրթության վերջնարդյունքներին 6.2. Առարկան ամփոփվում է քննությամբ՝ 4-րդ կիսամյակում) 6.3. Գնահատման չափանիշները (ընթացիկ ստուգումների) • տարբերակների երեք հարցերից յուրաքանչյուրին տրված պատասխանի բովանդակությունը • պատասխանի մեջ նյութի ինքնուրույն յուրացման մասնաբաժինը			

	• շարադրանքի տրամաբանվածությունը, ծրագրային նյութի յուրացվածության աստիճանը • ծրագրային նյութից դուրս իմացությունը 4. Գործնական աշխատանքների ընթացքում իմացության ստուգում 5. Ինքնուրույն աշխատանքների գնահատում • անհատական աշխատանքների հանձնարարում • իրավաբանական խնդիրների լուծում 6. Հաճախելիություն Գնահատման մեթոդը • դասերին հաճախման հաշվառում Գնահատման չափանիշը • ներկայություն • մասնակցություն հարցերի քննարկմանը 6.7. Համակարգչային թեստային ստուգում Գնահատման չափանիշները • համակարգչային թեստային ստուգում նախատեսված չէ 6.8. Ուսուցման վերջնական արդյունքների գնահատում 6.1-6.6 արդյունքների հանրագումար գնահատման հարյուր միավորանոց սանդղակով:

Դասընթացի թվանիշը, անվանումը	**Պ/բ-065-Քաղաքագիտություն**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10
			Սեմինար	14
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	Քաղաքագիտություն առարկայի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ քաղաքական պատմության, գործընթացների և զարգացման փուլերի մասին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում ուսանողը պետք է գաղափար ունենա քաղաքական համակարգի, պետության կառավարման տիպերի և ձևերի, քաղաքական իշխանության, քաղաքական կուլտուրայի, քաղաքական կազմակերպությունների, իշխանության ձևավորման սկզբունքների, միջազգային քաղաքական կազմակերպությունների մասին: Առարկայի ուսումնասիրումը հնարավորություն կտա պատկերացում կազմել հայ ժողովրդի մշակութային նվաճումների մասին, գնահատել գեղեցիկն ու մշակութային արժեքները: Քաղաքագիտություն առարկայի ուսումնասիրմամբ ուսանողը միաժամանակ կշփվի համաշխարհային քաղաքական պատմության, մշակութաբանության, փիլիսոփայության և այլ գիտությունների հետ: Քաղաքագիտություն առարկան նախատեսված է ներկայացնել ոչ մասնագիտական բաժիններին, որպեսզի ապագա մանկավարժը գիտելիներ ունենա քաղաքական			

	համակարգի և պետական կառավարման մասին
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* 1. ինքնուրույն վերլուծել քաղաքական իրադարձությունները 2. տարբերել քաղաքաքան և քաղաքագիտական սուբյեկտների գործառույթները 3. տարբարակել պետական կառավարման համակարգի տիպեը 4. տարբերակել պետության տիպերն ու ձևերը 5. հասկանալ քաղաքական կոնֆլիկտների տիպերն ու կառուցվածքը, լուծման ուղիները *Հմտություն* 1. գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն 2. հետազոտություններ կատարելու ունակություններ 3. սովորելու ունակություն 4. առաջնորդի հատկություններ 5. որակի կարևորության գիտակցում *Կարողունակություն* *1.*վերլուծման և համադրման ունակություն 2. կազմակերպման և պլանավորման ունակություն 3. հենքային և ընդհանուր գիտելիքներ 4. տեղեկատվությունը կառավարելու ունակություն, տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն 5. քննադատական վերլուծություն և ինքնաքննադատման ունակություն 6. միջառարկայական թիմում աշխատելու ունակություն
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1. Քաղաքագիտության առարկան, խնդիրները, մեթոդները, կապը հասարակական այլ գիտությունների հետ Թեմա 2. Քաղաքագիտության սուբյեկտները: Հասարակական քաղաքական համակարգ Թեմա 3. Պետություն, տիպերը, ձևերը Թեմա 4. Քաղաքական իշխանություն Թեմա 5. Քաղաքական գործընթացներ և կոնֆլիկտներ: Քաղաքական կուլտուրայի տիպերը Թեմա 6. Մարդու դերը քաղաքականության մեջ Թեմա 7. Անցումային հասարակության քաղաքական համակարգը: Իրավական պետություն
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով՝ 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ. • ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան, • ինքնուրույն աշխատանքի կատարում, • սեմինար պարապմունքներին ուսանողի մասնակցություն, • թեստային առաջադրանք պատասխանի ընտրությամբ կամ կարճ ազատ պատասխանով

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ԷԻԿ/ բ -091 Տնտեսագիտության</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">2 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">2-րդ տարի,2-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">24</td><td>Դասախոսություն</td><td>10</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td>14</td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">36</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">60</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">Ստուգարք</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Ամեն մի արտադրաեղանակի նպատակը հասարակության և նրա անդամների պահանջմունքների բավարարումն է: Հենց դրան է ուղղված արտադրության գործընթացը, որտեղ լուծվում է տնտեսական երկու հիմնախնդրի միչև առաջացող մշտական հակասությունը:
Ներկայումս խառը տիպի տնտեսության պայմաններում , հիմախնդիրը շուկայական գործընթացի գործողությունը, շուկայական հարաբերությունների զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկություններն են:Սահմանափակ ռեսուրսների պայմաններում, ավելի շատ պահանջմունքներ բավարարելու գործում մարդկանց ունեցած վարքագիծը:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.
Գիտելիք
• տնտեսական կատեգորիաներն ու օրենքները
• տնտեսագիտական գիտելիքների դերը և գործառույթները տնտեսության տարբեր ոլորտներում
• առարկայի կարևորությունը հասարակական տնտեսական հարաբերությունների բնագավառում
• հասարակության զարգացման պատմական փուլերի տնտեսական առանձնահատկությունները
Հմտություն
• մեկնաբանել տնտեսական երևույթներն ու տնտեսագիտություն առարկային, մեթոդներին և խնդիրներին
• շուկայական հարաբերությունների օրինաչափություններին
այն բոլոր մեթոդներին, որոնք անհրաժեշտ են տնտեսական հավասարակշռություն և համաչափություն պահպանելու համար
Կարողունակություն
• մեկնաբանել տնտեսական երևույթներն ու գործընթացները, դրանց պատճառահետևանքային կապերը
• կարողանա կատարել ճիշտ եզրահանգումներ
• ճիշտ ներկայացնել մարդ-տնտեսություն-տնտեսական քաղաքականություն փոխհարաբերությունը</td></tr>
</table>

